Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909, Շաբաթ, Նոյեմբերի 21-ին. Թիֆլիս. №47.



Худож.-Лит. С. Быхова, Тифлисъ.

ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
(30 ամեայ գործունէութեան առթիւ)




Եւ գիշերը լուսացնելով,
Անքուն ժամեր է անցնում.
Ջիթ, կոտաւի, եղ, ու պանրի
Դարդով շուտ է նա տարւում.

Գիւղացի չէ—գութանչի է.
Զօրան էլ չէ,—բայց կթում է.
Ղազազ էլ չէ,—բայց հիւսում է,
Մեղւի պէս միշտ աշխատում է.

ԲԱՑԻԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910

5 ՏԱՐԻ

# ԽԱԹԱԲԱԼԱ

5 ՏԱՐԻ

Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԷՆ ՇԱԲԱԹ ԱՆԽԱՓԱՆ

Պաշտօնական օրգան բոլոր հայ և օտարազգի գործիչների, որոնք արժանի են ծաղրանկարելու, քննադատելու, ծաղրի և ծիծաղի։

«Խաթաբալայի» բաժանորդները, այլև երդւեալ ընթերցողները ԱՊԱՀՈՎԱԳՐՒԱԾ ԵՆ ամէն տեսակ պատահարներից և խայտառակութիւններից։

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, և գտնւում է Սերգէևսկայ փող. № 1
Տան եղբ. Միրզոյեանների վերի յարկում

Յայտարարութիւններ ամէն լեզուներով և խիստ մատչելի գներով։
Մեր ընթերցողներին մօտ ենք ածում սեփական աէրօպլաններով։
Բազմաշխատ գործակալներին և «Թաթարողայի» պրօպագանդիստ տարածողներին «Թաթարալան» ուղարկւում ենք ձրի։



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

| | | |
|---|---|---|
| Տարեկան Թիֆլիզում | 4 ր. | դուրսը 5 ր. |
| Կէս տարւանը . . . . | 2 ր. | . . . 3 ր. |
| Երեք ամսւանը . . . | 1 ր. 50 կ. | |
| Ամիսը . . . . . . . . . . | 50 կ, | |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала“.

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction „Khathabala“.

Խմբ. հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐԻԱՑ ՎԵՐՋԸ «ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԱՐԺԷ 1 ՌՈՒԲԼԻ։

## ԱԼԷՔՍԱՆԴՐԷ ՔԱԼԱՆԹԱՐԸ

Դղրաշի դրանիցի վրէն, մէ քաղկի թաւուր գիղ կայ, անումը Արուլխ. էս Արուլխում՝ ը, որամէն դրուստ խուն ու չորս տարի աղաք, մէ օրինաւոր հայ վարժապետի տանը, մէ էրեխայ է ծնւում, վուրի անումը դնում են Ալէքսանդրէ։

Էս Ալէքսանդրէն, Աստուած կինք տայ իրեն, հենց ծնւելու օրւմէն մէ անդնջում աղայ է էլի, ջէր մօր փուրումը էլած ժուգն էլ ուրիշ թաւուր խասիաթ է ունեցի ու էնրամ արիլ է վուր, ժամանակեմէն մէ էրկու շաբաթ աղաք է ծնւի, ծնւելու բաշտան, էնչախը վուր պլտաին թաց թաց երեխի վրայ աղ ածի՝ — բէրիին (տատմայրին) կաղնացրիլ է վուտով ու կաթնատանեսութինի վրէն մէ դաստխոութին է կարդացի։ Իժում էլ էնդրդամ կաթն է խմի, վուր էլ մօր, էլ մամիդի, էլ դէդիդի ու իրենց հարևներու ծծերում կաթ չէ թողի, դիփ սա է անուշ արի։

Վարժապետ հէրը, վուրին Հէրապետ թալֆայ էին կանչում ու հիմի էլ ապրում է, էս բանը վուր իմանում է, մէ քիչ փիքրի մէջ է նրնգնում, ուզում է էլի թուրմէ, վուր էգ բանի համա նաչալնիկին տայի, համա խայխը չէ թողի։

Էստ օրւան եդը, էգ պստիկ Արուլխում ամէն շաբաթ իրիգուն կաղէտնները ժողովք են տարքելիս բլում ու էտ ժողովքերին Ալէքսանդրէն կարթալիս է բլում դաստխոութիններ խան մշակութէնի, խան դաշնակութէնի, խան կաթնատանեսութէնի, խան կագէտութէնի, խան էչմիածնականութէնի, խան խոտացանութէնի, խան գեղականութէնի ու խան էլ կարտոփիլութէնի վրէն։

Շատ չի անցնում ու մրա իրեք տարւումը, իր մամի շկոլումը վարժապետ է դառնում, չունքի ջէր ծնւելուց աղաք էլ, խիստ տաղանդաւոր խասիաթի տէր է էլի. մրա օխտը տարւումը դրան նշնում են Բաղւի բէալնի շկոլում աշկերտ. էստի ով տարէնը մէ կլաս կու փոխէր, դա էրկու կլասը մէ տարումն է էլի փոխելիս, ու աշկերտութէնի վախտ՛ը՝ 1869 Քրիստոսի թւին հասուց թրիստ է մողնում ուրիշներու հիդ ու «էս էլ բի մոցիքլութին» խաղում։

Շկոլիցը ձյիւ որամէն պրծնում են էն չախը, իփ վուր օսկէ մէնդալը տալիս են ու ասում «դնա տպալէր, ձիար վիկալ, կօսէ, մեզնից»։

Բաքւում, սա էլի կով ու մածնի կաթ ու սերի վրայ վուր խօսում է, էնդանցի հարուստներու ջիգրը դալիս է, վիր են կախում ու որան դրգում են պողնադոր Մօսկով Պետրովկի ակադէմում, վուր էնդի մէ քիչ խելքի գայ, կօսէ, կովերի ու օչխրների մէջ, կօսէ։

Բաղւումը, էն չախը, իփ վուր օրմօլէքիցը (հօրեբից) նաւթի վրէն կուպը էլ է հաւաքելիս էլի, էդ սեր է, կօսէ, ասիլ է Ալէքսանդրէ Քալանթարը։

Մօսկովումն էլ խելքի վուխտ մնում է ու էստի խոտ ու դարմնի վրէն շատ է փիքր անում. որան էստի ասում են՝ դուն խոտացանութէնի ու մածնի ու կաթի սպրափէսուր ու փիլիսոփուս կու ըլնաս, կօսէ։

Էնդանց որան դրգում են Կալուգա, Վօլօգդա ու ուրիշ քաղաքներ. մէ օր էլ, աստուծհան վաղ վաղ դալիս է էլի մեր ժամը, էստի ռասա է էկի 1879 թւին, վայենօրէն վուր վերչացաւ, դրուստ էն չախը, մեր հաջի Համբարցում Առաքելօվին։ Սա վուր պատմիլ է թէ Կուկաղումը, կօսէ, կովերը խուզերի հանգի ամէն էրկու ամիս մէ ջէր ծնւմին, կօսէ, խիստ է քէփի էկի. ու էնդանցէնէթ դէմուդէմը փուրգուն է նստի ու դրա Կուկաղ վաղ է աւի։

Ճամփէքիցը «Մշակի» համա բանիր է գրի, իրա անումինն էլ փիս խաչադուղի հանգի փոխիլ է, փոխվաչինքներ է կօսէ. ու ջէր Քալանթարեանց է էլի, իժում վուր «եանցը» ռանէրին դուր չէ էկի, Քալանթար է դառի, էստի էլ գիդացիլ են թէ թուրք է՝ դառիլ է Նամալեանց։

Շատ է անցի թէ քիչ, համա բաղաք վուր էկիլ է, «Մշակի աշխատա-

կից է գառի. Արծունովին՝ զուրթ է, լաւ չէ ճանաչէ, համա նապէզնիկ կի էլիլ է, ու մինչկի էտ ժուգը, աշուղութին էլ է արի։

Վիր է կալի ու միր բուլւարի վրէն ման գալիս, մէ լաւ մուխամբազ է ժողնի.

*Անա ծագից արեգագը, կօսէ.*
*Դէ քաշեցէք սիրուն եզնիր, կօսէ,*
*Առաջ տարէք արօրը.*

Արա բուլւրի վրէն ինչ արօրի տիղ է, միրչն էլ էս երգն է ասի։

*Ախ, բախ, իմ՝ նայրնիիր…*

Միթամ քիչ ինք քնում, ա՜յ։

Իժում գնացել է ու մէ օր էսաի, մէ օր էնդի, օր ու գիշիր է արի, ինչ տիղ լաւ մածուն է էլի, ինքն է կերի, ինչ տիղ լաւ կարաք ու սեր է էլի, անուշ է արի։

Էտ ժուգերումը փուող է էլի, փասկւիլ է. մէ քիչ ժուգ փուր անցիլ է, Արծունովը մեռիլ է, արան արիլ ին բէզախտուր, չունքի էն չախը ալբուութինը հրամանք է արի՝

— *Հայլիրը մենակ եղ ու մածնի, խոտ ու զարմանի վրէն պիտին փիրր անի ու ուտի, կօսէ։*

Էն օրւմէն դէսը, Ալէքսանդրէն բէզախտուր է էլի «Մշակի» ու Ամբարցում Առաքելօվին էլ, չանչալի հանգի հիդն է ունեցի։

Համ բէզախտութինը, համ իրա փէշակը խիստ չարչարելիս է էլի արան ու էտու համա էլ փիքր է արի ու տարին էրկու մասի է բաժնի. այ խօսկի գէլիշ՝ միր մէ տարին ան էրկու է արի, չունքի զամուրի (չղչիկ) թաւուր էլ գիշիրնիրը չէ քնի, ու թէ փուր գիշիրը «Մշակի» ու հաուց ակի խաթրու է չալիշ էկի, ցերեկնիրն էլ զուլուգումը կով ու հաւիր է կթի։

Մէ բանում լաւ խաթաթ է շանց ուի, էն մէկէլներու թաւուր քէլեխ ուտիլ շատ էլ չէ սիրի, համա «Մշակը քէլեխ է զարցրի ու ամեն օղիգետալցի թողիլ է էնդի ու հայիրն էլ խօ գիդէք, փուող ին սիրում քէլեխը։

Օրեկան քաղաքէն ու ութ սահաթ բանիլը արա համա սովորական է էլի, խանդախան մէ սահաթում եարաւն տիղ զաւախութինն է կարթացի ու ճամփին էլ տաշնուրթուգնիր է գրի։

Ջահիլ վուխտը գրիլ է գրքիր, «Պատրիկեանի նամակնիր», «Կինքի գծիր», համա հայերեմէն շատիրը ջէր չին կարթացի, էտ էն չախն է էլի, իփ փուր սա նամակեան էր գառի։

«Մշակ»-ումն էլ մէ զամ ակը փուխիլ էր, գառիլ էր Վրճին, իժում էլ Սիրող, հիմի էլի հաւաի է էկի, Ալէքսանդրէ Քալանթարեան է ուզում գրւի, կօսէ։

Ուտելու մէչ բան չէ սիրում. գրքերու մէչ Չերնիշեսկուն կերիլ է, Դարաշիւչին կուլ ուի, Դարւինի, Դրեպրի ու Սպենսերի գրքիրը խօ, գիփ խորւած ու տապակած է անուշ արի։

Դիլօնի զակազով գրիլ է «Սասուն», իր հայրենիք՝ Զօկլանդի վրէն կի, մէ բան չէ մոգնի։

Թասիաթով հեսաի մարթ է, կօսիս անտիկա, զլխին փամփիս, ձէն չի հանի, համա թէ Ամբարցումը տեհաւ էտ բանը, խիստ կու կատղի, կօսիս ինչ րլէ։

Պրօգրամնիր—մրօգրամնիր շատ ունի, տաշնուրթոյների թաւուր օրեկան եաստուն քասուն կու թխի։

Պօլիտիկուրի պարտիէքում մածնի նշանակութենի համա շատ է խօսի ու օչովին չէ կանացի հասկցնի, թէ մածունն ու կաթը սիպտակ է։

Ղուրթ է էն էլ, փուր զա մէնակ ուփրօ շատ բան է արի հայ գեղցու համա, քան թէ հարիր ուրիշնիրը, գիփ մէտի։

Դիզամնաեաններու մէչ ամենալաւը թէ կայ՝ էլի զա է, իս ու իմ հօրին գիդենայ ու գեղցու բարեգամը ուփրօ։

Կաթղիկուսական ենթրի վրէն նա էրկու ձեռքով էր մտիկ տալի, ու պատգամաւորութենի վրէն կի, մէ աչքով։

Մէ բանի մէչ դըռ խիլքը չիմ հասնում, հայ զազէթաչի փուր չը դառնար, էսօր ուփրօ մինձ անում կունենար, ու ամեն մէ տեղից վիկացող ցանցառ ուշիտել, ան օղիգետալցի ադիտատար՝ վրէն չէր խօսի։

Դասաչար Կալասուզեան

---

Պարոնը. — Որտեղ է տիկինը Դաւիթ։

Ծառայ. — Աղա, աղջիկ պարոնը գնացել է կանանց միթինգին նախագահելու…

Պարոն. — Իսկ երեխան ում խնամքին է թողել։

Ծառայ. — Աւեց, աղէն որ գայ, ասա երեխին պահի, չրան ինքը գայ։

Պարոն. — Իսկ երեխան եթէ լաց լինի և քաղցածանայ, ես ինչպէս կերակրեմ նրան։

Ծառայ. — Աղա, դէ որ լաց կըլի, էնա ծիծ կատա, մինչև խանումը կըգայ, էլի։

—oo—

# ԱԼ. ՔԱԼԱՆԹԱՐԻ ՄԱՍԻՆ

Կովկասեան առաջին գիւղատնտեսական ցուցահանդիսին Ալ. Քալանթարը, կաթնատնտեսութեան բաժնում, եռանդուն կերպով բացատրում էր իր շուրջը հաւաքուած բազմութեանը, կարագ ու պանիր պատրաստելու զանազան եղանակները։

Հաւլաբարեցի երկու հայ կանայք, որ ամբողջ օրը շարունակ թափառել էին ցուցահանդիսի մէջ ու համարեա ամեն բան տեսել, յանկարծ կանգ առան այն տեղ, ուր Քալանթարը գործիքը ձեռքին մի բան բացատրում էր։

— Ինչ ես կարծում Թագօ, — ասաց մէկը, — սա զուրթ ամքին է, թէ փալչիի շինած է։

— Ինչ գիդիմ, Կէկէլ ջան, էսոր դիփ ուցնաւուր բանիր իմ տեհնում, — պատասխանեց միւսը։

—

Ալ. Քալանթարի բարեկամներից մէկը, ցանկանալով ծանօթացնել նրան հասարակական գործիչ Պետրոս Մակարեանի հետ, սկսեց գովաբանել.

— Գիտե՞ս, Պետրոս աղա, Քալանթարը ինչ մարդ է, խելօք, գործունեայ, ազնիւ, շիտակ, ուղղամիտ, մարդասէր, ազգասէր, բարի, Աստուածապաշտ…

— Աւստում իմ, ախպէր, աւստում իմ, — ընդհատեց նրա խօսքը Պետրոսը, — փուր ասում իս, աւստում իմ, ինչի չիմ աւստայ… ամա փուր զօկ է։

---

## ՓՕԹԻԻ ԿՈՉԸ

*Եղած բարեկամիր Փօթի քաղաքի ժամի վրակացու Անդրէաս Ալրեկեանցին*

Անդրէաս Աղա ջան.

Դաղէթներուն մէջ շատ սրլամիշ գիրքեր, զալմաղալ կենիք, զուլաք, սուդ ու շիւան կէնիք, թէ ձեր ժամը կիստ է մնացիր, աղբատ իք, չիք կրնայ գլոխ բերի, զանէ-զուռ իք ընկի, օղորմութեն թափ կենիք կը։ Աղա հոգերարձու, նաֆիլա չարչըւիք կը, թէ օր Երւանդ վարդապետի գրածները կարդըցիր իք, էլ ժամ—մամ, պատարագ — մատարագ, ակրաէր—մէրակէր… հարկաւոր չէ։ Աստից յետև, մէ օրմ մեր տունը թափ զլլինք, մէ օրմ ձեր տունը, քիչըմ տատից անտից, կապը բրդուճ կարդանք կը, մէ լաւ ալ գինի կոնծինք կը ու աղաա օր զուն իս, Աստա բարով, էրթաս բարով։ Ալ ատից յետև զանգ զարնել, զալմաղալ ցկել մաշլաները, խալխին գիւադադար էնել, չարտկան բսել մօղա չէ, Երւանդ վարդապետը վերջացրիր է։ Բանմ ալ ըսիմ։ Թէ օր չիք հաւնի ատ վարդապետի ամբաղ դամբաղ բառծներուն, զուգիք հին դայափ ժամ շինիք. ան վախթը կարդըցէք «Խաթաբալի» № № 35, 41 Ղարսից զալայած պղընծները, տեսկէք թէ Ղարսի աղաները ինչդ գլոխ բերին, իրենց ժամը ինչդ շինեցին. հըս քանիմ հազար մանէթ էլ յաւեցիր է, չին գիդիր թէ յաւեցած

փարան ինչ էնին: Անգրէսս ազա ջան, ալ միք յուշանայ, գլխըներդ սա անց սաղնէք. Ղարսին մէջ Թրաշէք: Թէզ, թէզ. վրա գլխու, մեշօքները առէք ու Ղարս հասէք, փարաները տարէք ձեր ժամն ալ շինէք. Թէ բանն ալ յուխնայ կը, ձեր վարժարանի հախը ուէք: Բանն ալ բոխ. Թաղայ ժամին, Թաղայ ուէրանէր սաղ գուգայ կը. էդ էլ մէ Թաղա պսակած վարդապետամ հալբաթ կը ձարուի:

Ղալայչի Մարգար

---

* * *

(Նմանողութիւն)

Եթէ անգամ ինձ չարչարեն,
Դնեն գլխիս փշեայ պսակ,
Տանջեն, ծաղրեն, նշաւակեն,
Կամ՝ երեսիս տան ապտակ.

Եթէ նոյնիսկ ինձ անարգեն,
Դատապարտեն սեւ սինին,
Սուր նիզակով կողքս ծակեն,
Կամ՝ նպաստեն իմ մահին՝

Ես վճռական ճշմարտութիւն
Կը բարձրացնեմ՝ ի դրօշակ,
Արդարութի՛ւն, ազատութիւն
Միշտ կը կանչեմ՝ համարձակ:

Լ.

---

## ՈՒՂԵՂԸ ԽԱՌՆԻԱԾ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ ԿԱՐԾԻՔԸ

(Աշխարհիս վերջի առթիւ)

Հետաքրքրութեամբ բաւականութիւն տալու համար դիմեցի վերոյիշեալ փիլիսոփային, հետեւեալ հարցով.

—Ուղիղ է որ գրած է լրագրներում, իբրև աշխարհիս վերջն է լինելու 1910 թ.

Փիլիսոփայ.—Ճիշտն ասած, թէ որ թւին վերջը կը լինի, դրան ես չեմ պատասխանի, թողնում եմ ընկեր մաթէմաթիկոսներին, ես միայն այն կասեմ, որ յաւիտենական ոչինչ չկայ աշխարհիս վրան, ամեն ինչ փոփոխական է և վերջ ունի, նոյնպէս և աշխարհն ու ամբողջ մարդկութիւնը:

Մեզ յայտնի է, որ առաջ մարդիկ ապրում էին 500 տարի, մի քանի դարերի ընթացքում, հետզ. զօրութիւնը պակասելով հասել է մինչեւ 100-ի, ուստի հիմք կայ կարծելու, որ ապագայում մարդիկ ապրելու են ոչ թէ տարով, այլ օրով, այսինքն 100 օրական մարդը պէտք է հաշւուի ամենածերունին և այդպէս րոպէների և վայրկեանների կվերածւին ամիսներն ու օրերը, որից առաջ կը գայ.—մի վայրկեանում մարդիկ պիտի ծնւին ու ոչնչանան և դա կը լինի աշխարհիս վերջը:

Մաճ-ակ

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ղալայչի Մարգար ապօրը
Բարսանդար գիւղից

Մեծ շնորհակալութիւնով կարդացինք Ձեր նամակ Ղարսից «ժամ շինելու դայդէն» և որովհետև նոյն ցաւով մեր գիւղացիք էլ են բռնւած տասնեակ տարիներից ի վեր, ուստի և ամեն մի նոր գիւտ ժամ շինելու մասին, մեծ հետաքրքրութեան է շարժում մեր Թմրած ժամի պօվերնիկների Թմրած ուղեղներում: Ի սէր Աստծոյ, Ղալայչի ապեր, եթէ կարող էք մի գիւտ էլ մեզ համար գտէք. Թէ չէ մեր ուէրանէրները ժամ-պատարագից հարամ են մնացել. չար լեզուները ասում են, որ նրանք երկար տարիներով ժամ պատարագ չանելուց, մոռացել են պատարագի արարողութիւնները. եթէ չէք կարող մի նոր գիւտ հնարել մեզ համար, գոնէ բարի եղէք մեր գիւղի պօվերնիկների ուղեղը կլեկել. քանզի նոր խելքով կարողանան, մեր նորոգած ու ասարտեխլուն մի զատ պակաս ժամը, օծել տան: Օծման հրամանը առում են, երկու տարի առաջ է եկած ս. Աստուածորդից: Տնարանց պօվերնիկը որբազանի չափ էլէ վռազում չեն իրանց ժամի համար ու հարուստ-հարուստ մեռելները անպատարագ են գնում էն գինիէն:

Ութ տարուց աւելի է, որ նորոգում են նորոգում, գետ յուսամուտի, երկու տարի առաջ գնած, ապակիները չեն կարողանում գցել տալ: Ժամը երկու դուռ ունի, մինը փակում են, միւսն է բացւում, այն են փակում, այս է բացւում: Ժամի տանիքն էլ ներկած է, պակաս պատուհաններն են գլրդառում. Ի սէր մեր ժամի, էդ ցիրկի-միրկի գուշկա-մուշկան, օրխորդ մօրխորդին, օյին-մօյին տարբերների մի սարք մեզ մօտ ուղարկեցէք, հաւատացնում եմ մեր ուէրանէրնին չէ որ, մեր պօվերնիկն էլ կը ծախեն բիլէթները:

Մնամ քո գիւտին և խորհրդին անհամբեր սպասող «Թաթարալայի» կուսակցութեան անդամ

ՄԻԼԵ—ՔԻԼ

---

## ԿԱՆԱՆՑ ՇՈՒՐՋԸ

(Էպիզոդներ)

Էլէգանտ հագնւած պարոնը, ծնկաչոք ընկած մի գեղեցկուհու առաջ, յայտնում է իր սէրը և աղերսում փոխադարձը:

Գեղեցկուհին հարցնում է.

—Ասում էք երկու կալւածք ունի՞ք:

—Այո և երեք էլ տուն:

—Դէ էլ ինչպէս էք կասկածում իմ սիրոյ մէջ:

—

—Ասացէք խնդրեմ, ձեր քոյր Հռիփսիմէն, որ աւարտեց բժշկական մանկաբարձութիւնը, ինչ եղաւ:

—Ոչինչ, նա ամուսնացաւ հենց իր առաջին պացիէնտի հետ:

—

—Ա՜խ, այս ինչ ցաւ է, լացակումած գանգատւում է Լիզան, նշանւածս այս գնացս կտորները չի հաւանում, իսկ խանութում էլ չեն փոխում:

—Այն ժամանակ, փոխիր նշանածիդ:

—

Նէ.—Ո՞վ է ձեզ սովորեցրել այդպէս կրքոտ համբուրել:

Նա.—Գիմնազիայի պատրաստականում սովորող, ձեր փոքրիկ քոյրը:

Կրլլան Ծակովի

---

## Մ Ի Ք Ի Չ

Մի քիչ լեզւաբանութիւն.—Ազնիւ մարդ անւանում են նրան, ով չի գողանում, չի Թալանում, չի դրկում և այլն. Թէկուզ այդ մարդը անհաւատարիմ լինի իր կնոջը, չը ճանաչէ ամուսնական անկողնի սրբութիւնը: Ընդհակառակը՝ կնոջն անւանում են ազնիւ այն ժամանակ՝ երբ նա հաւատարիմ է իր ամուսնուն ու Թիթեռի պէս այս մարդուց այն մարդու վրայ չի Թռչում, պրոպեկտի կաւալերների հետ աչքերով չի սիրախօսում, Թողի պատրաստկով՝ փողոցներում տղամարդ տեսնելիս՝ շրջազգեստը մինչեւ ծնկները չի բարձրացնում: Անազնիւ կին դարձածքը, Թեթեւ վարքի տէր կին է նշանակում, բայց երբէք՝ գող, դրկող, Թալանող և այլն և այլն: Այն՝ որ մարդուն կեղտոտում է, «բացառապէս» կնոջ վերայ բիծ անգամ չի Թողնում. ու այն՝ ինչ որ կնոջ «պարդն» է կազմում, տղամարդու համար ծախու հին շորի նշանակութիւն ունի: Հասկացէք այժմ, Թէ ինչն է բարոյական և ինչը անբարոյական: Այս «ազնիւ» բառը անորոշ չափ է ուրեմն. տղամարդից ուրիշ բան է պահանջւում, կնոջից ուրիշ...

Մի քիչ Թւաբանութիւն.—Կանանց շրջանում նկարիչն ասեց. «Տիկիններ, ես նկարում եմ գծոցը ու դժւարանում եմ Սաթալէի կնոջ պատկերը ձեւակերպել. ես չգիտեմ՝ գէ՞ր թէ նիհար էր նա: Ինչպէս խելական կաւալեր, ես այս հարցում ուզում եմ յարմարւել ձեր կարծիքի հետ. ասացէք խնդրեմ, գէ՞ր թէ նիհար էր, գեղեցիկ սեռի գծոյքի այդ ներկայացուցչուհին»:

Գէ՜ր, նիհա՜ր, նիհա՜ր... չէ, գէ՜ր, գէ՜ր, նիհա՜ր, գէր... Որպէսզի բանը կռւի չհասնի, խելօք նկարիչը հարցը քւէարկութեան դրեց: Ինքը նկարիչը չէր քւէարկում: Եօթը կին էին ընդամենը: Քւէարկութեան հետեւանքը, գէր—հինգ ձայն, նիհար—երկու ձայն: Իմանալ կանանց այդ շրջանում, քանի գէր և քանի նիհար կին կային:

Մի քիչ ստատիստիկա.—Քառասուն միլիօն բնակիչ ունեցող Ֆրանսիան, համաձայն 1910 թ. բիւջէի՝ մէկ միլիոն պաշտօնեաներ պիտի ունենայ. նշանակում

է իւրաքանչիւր քառասուն ֆրանսիացի պարտաւոր է մի բիւրօկրատ պահել. խեղճ ֆրանսիացիք... Դրա փոխանակ միւս կողմից՝ ֆրանսիական ոչխարների թիւը պակասում է։ Այսպէս. այս միամիտ կենդանիների թիւը Ֆրանսիայում 1840 թւին 32 միլիօն էր, 1892 թւին 21 միլիօն։ Ես այս համեմատութեամբ ի հարկէ չեմ ուզում ասել, որ ֆրանսիական ոչխարները հետըզհետէ մտնում են պետական ծառայութիւն, այլ այն, որ բիւրօկրատները լաւ կանէին, եթէ հովիւներ դառնային, ոչ թէ հոգևոր հովիւներ, որովհետև ոչխարների թւի պակասելու պատճառներից մինն էլ, հովիւների քչութիւնն են համարում գիտնականները...

Գէօ-Դ.Լօ

## ԲԱԼԱՆԹԱՐԻ ՇՈՒՐՋԸ

Ալ. Բալանթարը Թիֆլիսում մի անգամ այցելում է նորաբաց նկարչական ցուցահանդէսը։ Ի թիւս միւսների, ցուցահանդիսում ցուցադրւած է լինում մի պատկեր՝ «Արարատի» տեսարաններից» անունով, որի նիւթն էր ոչխարների հօտը տաղաւարի մօտ կանգնած։

Բալանթարը սկզբում թռուցիկ ակնարկ է ձգում նաև այս պատկերին, ապա, ուշադրութեամբ դիտելուց յետոյ, նկատում է.

—Այս պատկերի մէջ ոչխարները սպիտակ են նկարած, մինչդեռ Արարատում սպիտակ ոչխարներ չկան։

Այստեղ ոչխարի դմակը թուշի ոչխարի դմակի նման է, իսկ ախր Արարատինը մաքրիի տեսակիցն է

—Եւ վերջապէս վրանն էլ՝ բոլորովին այս շրջանի վրանների նման չէ։

Երբ մի այլ անգամ Բալանթարը ուրիշ ցուցահանդիսում տեսնում է նոյն պատկերը, կանչում է նկարչին և մատնանիշ է անում իր նկատողութեան վրայ։

Նկարիչը ափշած նայում է Բալանթարի երեսին և իբրև պատասխան՝ ասում է.

—Բանը նրանումն է, որ տեսարանը վերցրել եմ յիրաւի Արարատը, իսկ ոչխարները վերցրել եմ այստեղ...

—

Յայտնի պարօն Տիմօֆէևը Բալանթարի գիւղատնտեսական պատրաստականութեան մասին հետևեալ կարծիքն է յայտնել։

—Եթէ ուզում էք, որ Բալանթարը որևէ դեկուցագիր պատրաստէ, յայտնեցէք այդ մասին նրան մի ժամ միայն առաջ. նա այդ ժամում բաւական է որ մտածէ և ապա արդէն կը խօսի...

—

Ալ. Բալանթարը վեր է կենում առ. ժամը $5^{1}/_{2}$-ին և սկսում է իր առանձնասենեակում աշխատել մինչև ժամը $9^{1}/_{2}$-ը։ Այդ ժամին նա դուրս է գալիս իր պաշտօնական գործերը կատարելու։ Ժամը 12-ին՝ նա «Մշակի» խմբագրատանն է. այստեղ աշխատում է նա մինչև ժամը 3-ը։ Ապա այդտեղից նա կանչւում է գիւղատնտեսական ընկերութիւնը, կամ մի այլ տեղ։ Ժամը $4^{1}/_{2}$-ին, նա գնում է տպարան խմբագրելու լրագիրը։ Այդտեղ մնում է 3 ժամ։ Ժամը 8-ի մօտերը նա ձեռքում բռնած մի քանի հրաւիրաթղթեր՝ մտածում է, որին գնալ և մի տեղում որքան մնալ, որ միւսին էլ հասնի... Այդպէս նա ժողովներից ուշ է վերադառնում, գիշերւայ ժամը 12-ին և տեսնում է սեղանի վերայ մի տասնեակ հրաւիրագրեր վաղւան համար...

Ապա երբ է նա ճաշում։

—Նա ճաշում է միւս օրը... Է.

## Մ Տ Ա Գ Ո Ղ Ի Ն

Ստախօսից վեհագոյն,
Հռչակաւոր բանագող,
Անէրես ճանճի նման,
Ամէն բանի մէջ ընկնող.

Հազարարձու, երեսփոխ,
Եւ ինքնակոչ պատւիրակ,
Առաստաղներ ծեփող
Ձանիս նման օրինակ.

Ազգասիրկիչ եւ գիտուն
Ինքը իրեն ձեւացող,
Ինչ էլ լինի, որ առես
Ինքնագլուխ խցկւող.

Ձեռք առած սուր մկրատ
Կտրատում ես գրքերից
Ուրիշի փառաւորները,
Հէչ չես քաշւում ոչ ոքից.

Մերկութիւնդ ծածկում ես
Օտարների հագուստով,
Այդ բոլոր դու գիտես՝
Եւ տանում ես անխռով,

Փչիր որքան կարող ես,
Համառողին երանի.
Շարունակիր դու այդպէս.
Սուտն ասողին ի՞նչ անի։ *)

Մ. Ե.

*) Այս ոտանաւորը կարելի է վարից դէպի վեր էլ կարդալ, առանց փոխելու, թէ ոտանաւորին, թէ գրողին և թէ նրան՝ ում համար գրւած է։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԱՐԻՈՂ ԿԱՆԹԵՂ

Թարգմ.

Երկու երիտասարդ աղայ ու աղջիկ, շատերի նման սիրահարւել էին ու պսակւել, խոստանալով և երդւելով, որ միմեանց չդաւաճանեն, միշտ հաւատարիմ ամուսիններ լինեն...

Ամուսնութիւնից շատ չանցած՝ մի գիշեր կինը արթնանալով տեսնում է, որ ամուսինը բացակայ է ննջարանից, բայց մի քանի րոպէից յետոյ վերադառնում է։

Կինը չիմանալով նրա ուր լինելը, մտադրւում է միւս գիշեր հսկել և տեսնել թէ ուր կգնայ ամուսինը։ Հետևեալ գիշեր կինը իրան քնած է ձևացնում և տեսնում է, որ ամուսինը կամաց վեր կացաւ և դուրս գնաց, ինքն էլ է վեր կենում և գաղտնութեամբ հետևում նրան։

Ամեն բան տեսնելուց և հասկանալուց յետոյ վերադառնալով ննջարան, կինը մի քիչ մտածելուց յետոյ, հանգցնում է պատից քաշ արած սրբի պատկերի առաջ վառւող կանթեղը։ Հետևեալ օրը կինը ասում է ամուսնուն։

—Երեկ գիշեր մեր կանթեղը հանգել էր, կարծեցի թէ ձէթը վերջացած կլինի, բայց առաւօտեան մեծ եղաւ զարմանքս, երբ ձէթով լիքը գտայ կանթեղը, ուրեմն ինչու պէտք է հանգչէր։ Երևի մի վատ բան է կատարւում այստեղ, և սուրբը չհաւանելով մեր վառած կանթեղը, այդպիսով ցոյց է տալիս իւր բարկութիւնը։

Ամուսինը լսելով կնոջ ասածը և իրան գտնելով յանցաւոր, կասկածը հեռացնելու համար ասում է. «եթէ իսկապէս հանգել էր, ես էլ նոյն կարծիքին եմ, որ մի բան կլինի» ու մտադրւում է անձամբ փորձել։ Առաջիկայ գիշերը նա նորից գնում է իւր գիտեցած տեղը և վերադառնալով կանթեղը հանգած է գտնում։ «Մի՞թէ իսկապէս իմ պատճառով է այս երևոյթը» մտածում է նա և վճռում է միւս գիշեր դուրս չելնել ննջարանից և տեսնել դարձեալ կհանգչի՞ թէ ոչ։ Եւ որովհետև նա դուրս չեկաւ, կինն էլ չհանգցրեց, ուստի նա տեսաւ որ իրօք իւր պատճառով է այդ, բայց ուզեց նորից փորձել և մի քանի փորձից յետոյ, հաստատ համոզւեց որ ինքն է պատճառը։ Այդ ժամանակ կինն ասում է։

—Այս գիշեր մեր կանթեղը նորից հանգել էր, ես վախենում եմ, որ մեր գլխին մի փորձանք կը պատահի և մեր մեղքերի համար խիստ կպատժւենք։

Ամուսինը չիմանալով կանթեղի հանգչելու բուն պատճառը և սնապաշտ ու նախապաշարւած լինելով, ինքն էլ է կասկածում և վախենում ու աղօթում է կնոջ առաջ խոստովանել իւր մեղքը։

—Գիտես սիրելիս... ես... սկսում է ամուսինը շփոթւելով և կարմրելով։

—Ի՞նչ պատահեց քեզ, ինչու այդպէս փոխւեցար, հարցնում է կինը։

—Ներիր ինձ, հոգեակս, ասում է նա, չոքելով կնոջ առաջ և աղերսական հայեացք ձգում երեսին, ես մեղաւոր եմ քո առաջ, ես արժան չեմ քո սիրուն... ախ ես անարժանս ինչպէս յիմարացայ և վատահացայ քեզ դաւաճանել... քեզ, որ այնպէս ջերմ կերպով սիրում էիր ինձ, մանաւանդ վերջին ժամանակներս...։ Մենք խոստացանք միմեանց չդաւաճանել, մինչև մահ հաւատարիմ մնալ, բայց ահա ես դարձեցայ խոստմնազանց և

* * *

(Նմանողութիւն)

Ձեմ կարող երբէք ամբոխին լսել,
Ամբոխի նման անկենդան անցնել,
Միշտ էլ միևնոյն հոգսերով շնչել,
Ինչպէս նա կոյր է, այնպէս կոյր լինել։

Ես այս աշխարհում հպարտ չեմ ծնուած,
Բայց սիրտը կրծքում գրել է Աստուած։
Դրա համար էլ՝ ամբոխից ազդուած,
Փուշ ու տատասկով ուղիս է ծածկուած։

Leonis

## ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

Մի ուսանող անպատրաստ կերպով գալիս է քննութեան և ոչինչ չի կարողանում պատասխանել պրոֆեսորի առաջարկած հարցերին։

—Ասացէք, խնդրեմ,—երկար սպասելուց յետոյ պրոֆեսորը դիմում է ուսանողին,—ինչ տարբերութիւն կայ դատարկ գլխի և ձմերուկի մէջ։

Ուսանողը ապշած շարունակում է լռել և ոչ մի խօսք չի կարողանում արտասանել. այդ ժամանակ պրոֆեսորը բարեծիծաղ նկատում է.

—Այն, որ ձմերուկի մէջ գոնէ կորիզներ կան, իսկ դատարկ գլխում՝ այն էլ չկայ։

—

Մի ուսանող ամբողջ տարուայ ընթացքում երբէք ներկայ չի լինում դասախօսութիւններին և ահա քննութեան օրը գալիս է պրոֆեսորի մօտ քննուելու։ Այդ նկատում է պրոֆեսորը և առաջ քան քննելը՝ դիմում է ուսանողին.

—Թոյլ տւէք ներկայանամ ձեզ, պրոֆեսոր X...

## ԽՈՒՐԴԱ-ՄՈՒՐԴԱ

—Քանի տարեկան էք.

—Երեսուն.

—Իսկ ձեր փոքր քոյրը.

—Երեսուն հինգ.

—Ուրեմն դուք ձեր քրոջից փոքր էք...

—

—Գիտե՞ս ինչ. այսօր ես կօշիկներիս համար նալ եմ գնել. այդպիսի բան դու երբ և իցէ լսե՞լ ես.

—Այս ինչը ունեք.

—Հ՛ը... իսկ ես ամենից առաջ իշու ոտների վրայ եմ տեսել.

—

—Ձեր անունը, տիկին.

—Ոչինչ.

—Խնդրեմ, խնդրեմ տիկին, ասացէք ձեր անունը.

—Գնա կորիր. չասացի՞ ոչինչ.

—Իսկ ձեր հայրանունը.

—Էլի... չե՞ս հասկանալ, չասացի՞ ոչինչ, չասացի՞ քեզ՝ յիմար.

—Ուրեմն, տիկին, դուք Ոչինչ Յիմարեան էք...

—

Շունը մի պարոնի ոտն է կծու տալիս. այդ նկատում է շան տէրը, և իսկոյն դիմում պարոնին.

—Խնդրեմ ներեցէք.

L.

* * *

Հետևեալ կուրիօզն է տեղի ունենում Օդեսայի մօտերքում գտնւող մի զօրագնդում։

Նորակոչ զինւորներ են բերում, որոնց թւում բազմաթիւ լեհացիք և վրացիներ։ Գնդապետը գալիս է քննութիւն կատարելու, թէ նրանցից ով ինչ գիտէ։ Պէտք է յիշել, որ դրանից առաջ, սպաները զինւորներին սովորեցնում են, թէ երբ որ զինւորը պատասխանելիս լինի սպային. պէտք է վերջը աւելացնէ «Ваше Благородіе!»։ Գնդապետի առաջին հարցը լինում է այն, թէ ով գիտէ «Հայր Մեր»։ Զինւորները մէկ մէկ սկսում են պատասխանել. մի լեհացի ասում է աղօթքը լեհերէն, վրացին՝ վրացերէն, միւսը՝ ռուսերէն, մի խօսքով, ով ինչ լեզւով էլ գիտէ, այնպէս էլ պատասխանում է։ Հերթը հասնում է ռուս զինւորին։ Սա բաւականին սահուն կերպով ասում է տէրունական աղօթքը և երբ հասնում է վերջին խօսքերին՝ во вѣки вѣковъ, յանկարծակի բացականչում է. Аминъ Ваше Благородіе!

—Дуракъ ты этакій!—նկատում է գնդապետը զինւորին. դու լսել ես, որ առհասարակ օֆիցերին պատասխանելու ժամանակ, վերջը պէտք է աւելացնել Ваше Благородіе, բայց չգիտես, որ այստեղ պատասխան չէ մի որև է հարցի, այլ աղօթք...

Այդպէս է լինում կեանքում և շատերի հետ, որոնց միայն կարելի է կրկնել ռուսերէն յայտնի առածը—слышалъ звонъ, да не знаетъ гдѣ онъ.

L.

դաւաճանեցի քեզ... Հեռացրու, սիրելիս, մեր աղախնին... Նրա գեղեցկութիւնով հրապուրուեցայ և նրանով գայթակղուեցայ... Ճ... ես... Ներիր ինձ հոգիս և եթէ ամեն բան հասկացար, խնդրում եմ բոլորը մոռացիր...։

—Վեր կաց սիրելիս, վեր կաց, ես այդ բոլորը արդէն գիտեմ, ես ներում եմ քեզ, բայց դու ինձ կներէ՞ր... ասում է կինը խորհրդաւոր կերպով, չվստահանալով ուղիղ նրա երեսին նայել և տանջելով ներքին յուզմունքից։

Ամուսինը հիմայ արդէն հասկանում է, թէ ով էր կանթեղ հանգցնողը և տեսնելով կնոջ խոհեմութիւնը, բարեսրտութիւնը ու ազնուութիւնը, որ նա ուրիշ միջոցների չէ դիմել, կամ իր նման վարել՝ զգացւում է, և արտասուքը աչքերին փաթաթւում է կնոջը ասելով։

—Օ՜, դու որքան բարի ես, իմ անգին, իմ հրեշտակ, դու ինձնից բարձր ես, ես քեզ պարտական եմ։ Այսուհետև ազնիւ խօսք եմ տալիս, որ մինչև մահ յարգեմ, սիրեմ և պաշտեմ քեզ, առաւել ևս ջերմ ու անկեղծ կերպով։

Այո, ճիշտ ես ասում, եթէ ես լինէի, չէի ներիլ. խոստովանում եմ, որ մենք տղամարդիկս քարասիրտներ ենք, մենք չենք խղճում, և ահա մեր պատճառով քանի-քանի կանայք, իրանց ամուսիններից հեռացած, փողոց են շպրտուած, մեզ պէս անխիղճներից գայթակղելու պատճառով։

—Ճիշտ այդպէս է, ասում է կինը, որի մէջ խօսում է կնոջ արդար բողոքի ձայնը, և ճո՞ւր է որ բոլոր մարդիկ զգային նոյնը, ուղղէին իրանց և բացի իրանց կնոջից, ուրիշ ոչ ոքի չճանաչէին։ Իսկ եթէ այդ չէք կարող, ապա մեզ էլ ազատ թողէք մեր անելիքների մէջ... Էլ չի կարողանում շարունակել, նրա ձայնը դողում է, մերթ խոնարհում գլուխը յանցաւորի նման, կարծես խղճի խայթոց է զգում, մի հոգս կրծում է նրա սիրտը։ Ամուսնու անկեղծ խոստովանութիւնը, իւր պէս մի յանցաւոր կնոջ առաջ՝ տանջում է նրան այն աստիճան, Որ ընկնում է ամուսնու ոտքերը։

Ամուսինը ապշած նայում է կնոջ այդպիսի փոփոխութեան վրայ և զարմանում։

—Ներիր ինձ, սիրելիս, ես էլ յանցաւոր եմ, խոստովանեց կինը և տւեց ամուսնուն մի նամակ, ահա, այստեղ ամեն բան կայ, ամեն ինչ կիմանաս...։

Ամուսինը ապշահար կարդում է նամակը, մի բոպէ լուռ նայում կնոջը, կատաղաբար պատառոտում է նամակը և գոռում։

—Ժենեա, դու... այդ անտանելի... անկարելի է... դու ուրիշի գրկո՞ւմ... բայց ո՞վ է այդ աւազակը, ասա, ով է...

—Աւազա՛կ, ասում է կինը մեղմաբար, ուրեմն մեր աղախնի ամուսինն էլ իրաւունք ունի քեզ այդպէս կոչելու... Ներիր Վանեա, ներիր, հանգստացիր և մոռացիր անցեալը և թող ոչ մէկիս կողմից չկրկնւի նոյնը։

Նրանք հաշտւեցին և նորից խոստացան...

Ցավ-Մառ

—Ո՞ւր ես գնում։

—Թատրոն.

—Ի՞նչ են խաղում...

—Ապուշը...

—Փողոցում քի՞չ կան բնական ապուշներ, ինչ կարիք կայ, կեղծը տեսնելու համար թատրոն գնալ, փող վճարել։

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

ՊՕՆԺՈՒՐԻՆ ՄԵԼՔՈՆԻՆ

Ինչու էք գրում եվ և ոչ եւ կամ և, եթէ կարծում էք, թէ ւ և վ տարբեր հնչիւն ունին, կարող էք փորձել այսպէս.

Եւ=ев, եվ=ев. ուրեմն
եւ=եվ, իսկ այստեղից,—
ւ—в, վ—в, ուրեմն՝ ւ=վ.

Կարող էք գրել և՝ Եւա, Եսաւ Եւրոպա, Աւստրիա, Բաւարիա և այլ սրանց նման բառեր և վերածել ռուսերէնի կամ մի այլ լեզուի, և կը տեսնէք, որ մեր ւ-ինը դառնում է в, վեր նոյնպէս в: Ուրեմն մեր ւ և վ գրերը նոյնահնչիւն են և հարկ չկայ եւը չինել եվ։

Դ. Ա.

Դատաւոր.—Ի՞նչ էք ուզում տիկին.
—Այս կինը անիծեց ինձ և մազերս պոկեց.
—Առաջարկում եմ հաշտուել։
—Ոնց թէ հաշտուել.
—Այնպէս, համբուրուեցէք, հաշտուեցէք։
—Ես սրան ինչ պէտք է համբուրեմ։
—Ա՜յ էսպէս, առաջ ես ձեզ կը համբուրեմ, յետոյ դուք համբուրուեցէք։
Դատուողները դուրս են փախչում և հաշտւում։

—

—Тетя, ինչ ես գրել տալի այդ օրիորդներին.
—Բողոք եմ գրել տալի իմ հարսի վրայ։
—Խնդրեմ, իմ կողմից էլ հարց ու բարով գրեք պառաւորին.

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Բալախանի. Խաչատուր Աւետեանին.—Ճառը, որ դուք ուզում էք, կը գտնէք Բագուի բոլոր դեղատներում ու գրավաճառների մագազիններում. դիմեցէք այդտեղերը յայտարարութեան հետ միասին։

Հին-Նախիջեւան. Հայոց գիւղացիների ուսուցչական խմբին.—Ձեր նամակը ցոյց է տալիս ձեր գիտական, բարոյական և մտաւոր պաշարը, մենք կը տպենք նամակը, որպէսզի հասարակութիւնը իմանայ, թէ ովքեր են իր որդոց կրթիչները։

Չիրախլի. Զնդանին.—Ուղարկեցէք, եթէ լաւ կը լինի, կը տպուի, անյարմարը զամբիւղը կը գցուի։

## ՆՈՐ ՍՏԱՑՒԱԾ ԳՐՔԵՐ

Հասկեր № 10 հոկտեմբեր, պատկերազարդ յաւելուածով «Սոված Գայլ»

—

Տարազ. պատկերազարդ հանդէս №№ 9—10 սեպտեմբեր և հոկտեմբեր։

—

Բժշկապետ Ա. Բաբայեան. Եկեղեցական առողջաբանութիւն։
Գինը 50 կոպ.

Մ. Տալախչեան. Գործնական տարրական բերականութիւն
Գինը 10 կոպ.

—

Նէ.—Միթէ մինչև հիմայ հաւատարիմ էք ձեր ամուսնուն…
Նա. Այո…
Նէ.—Եւ դուք չէ՞ք վախենում, որ դաբանով, կձանձրացնէք նրան։

—

—Ասա ինձ, Միշա, երբէք մտքովդ չի՞ անցել, որ ես կարող եմ քեզ «դաւաճանել»։
—Երբէք…
—Երջանիկ ես.


# ՓԱՐՈՍ

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ 1910 ԹՈՒԱԿԱՆԻ

Հարուստ ու ճոխ բովանդակութեամբ։ Պարունակում է իր մէջ մի շարք յայտնի գրական գործիչների յօդուածներ, գրած յատկապէս օրացոյցի համար։ Ունի հայերիս մէջ դեռ լոյս չտեսած արժէքաւոր յաւելուած «ԹՈԽՄԱՀԻՑ ԳՐՈՂՆԵՐ» վերնագրով, որի մէջ զետեղուած են քսանհինգ հայ գրագէտների պատկերներ իրենց համառօտ կենսագրական և գրական գոյնը որոշող յօդուածներով։ Վեհ. Կաթողիկոսի և Մինաս Չերազի պատկերներով։

ՕՐԱՑՈՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

**Մասն I.** 1) Շարժական և անշարժ տօներ, 2) Կայսերական տօներ, 3) Պահքի արարողութեան թոյլատրելի օրերը, 4) Օրացոյց 1910 թուականի, 5) Ժամերի համեմատական ցանկը, 6) Ոը օրը խանութները պիտի փակել։
**Մասն II.** 7 [illegible], 8) Օրէնսգրքեր, 9) Զինուորագրական կանոններ, բ) Ինչ արժէ զինուորական ծառայութիւնը, 10) Մեծ պետութիւնների զինուորական բիւջէները։ 11) **Քաղաքական.** Մերձաւոր արեւելքի վերածն. Վարդան, 12) **Երկրաբանական.** Երկիրը կը մեռնի ծարաւից, 13) Հիւսիսային բեւեռի բացումը, 14) Առողջապահութիւն ա) Տարւայ յարատեւութիւնը, բ) **Տիեզերք,** Տարբական հակացոյցութիւններ աստղագիտութիւնից, գ) Մոլորակների համեմատական ազդւածք, 15) **Գիտական հետազօտ** ա) Երազների վաղեմի բացատրութիւնը, բ) Երազները կեանքի արտացոլումներն են, գ) Երազի հոգեբանութիւնը, դ) Երազները և մեր հիւանդութիւնները, ե) Երազները և նրանց նշանակութիւնը, 16) **Առողջապահական** ա) Մենք շատ ենք ուտում, բ) Ննջելու բաժինը 24 ժամւայ համար, գ) Մարդոց սննդի ցանկը, դ) Մածուն և կէֆիր, ե) Առողջ մարդու ննջարանը, զ) Հագուստը. 17) **Գիւղատնտեսական.** Երկրագործական գործիքների և մեքենաների մասին. Ա. Աթանասեան 18) **Գիտական.** Ջուրը. Ե. Աղաեան. 19) **Լեզուագիտական** ա) Էսպերանտօ կամ միջազգային լեզու, բ) Գլխաւոր լեզուների տարածութիւնը, գ) Բարբարոսների այբուբենը. 20) **Վէպ,** Կայք կտրած կինը, Նար-Դոս 21) **Դրամական** ա) Ուսումը պատգամւոր Ղ. Աղայեան բ) Ազատ մանկան տունը Կ. Վէնցելի, 23) **Կենսագրական** ա) Մաղաքիա II, կաթողիկոս Ամենայն Հայոց, բ) Մինաս Չերազ, 24) **Առեւտրա-Արդիւնաբերական** ա) Ընդհանուր ակնարկ, բ) Առեւտրական և ֆինանսական հաստատութիւններ, գ) Գիւղական բանկեր, Ս. Ղալաչեան դ) Հարկեր և տուրքեր, ե) Պարտամուրհակի հարկեր, զ) Նօտարական ծախսեր, է) Մուրհակի մասին, ը) Պարտաթուղթ, թ) Պահպանութեան թուղթ, ժ) Տուգանքի թուղթ, ի) Կանխավճարի մասին, լ) Նուէր 25) **Փոստ.** (Կանոնագր. նորագոյն հրատարակ։ Այս տարի վերցրած է միայն ներքին յարաբերութիւնը լիակատար (45 երես) մանրամասն սակագներով և ցուցակներով։ 26) **Անեկդոտ,** 27) **Զուարճալիք** ա) Զւարճալի խնդիրներ. բ) Ինչպէս գտնել մէկի տարիքը, գ) Տանելիքու անյաջող փորձ (ատլասի խաղեր). 28) Ծովը, Վ. Փափազեան. 29) **Սատիրիկա** 30) Արհեստակցական։
Յաւելուած. **ԹՈԽՄԱՀԱՑ-ԳՐՈՂՆԵՐ**, գեղեցիկ թղթի վրայ, 64 երես, համառօտ կենսագրական բնորոշ յօդուածներով։

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊ.

Օտար քաղաքացիներին 20% զեղչ և փոստի ծախսը մեզ վրայ։
Դիմել Тифлисъ, Типографія „Эпоха" В. Вардаиняну.
0—2



РОЗОВОЕ
ХРУСТАЛЬНОЕ МЫЛО № 4711

ՎԱՐԴԱԳՈՅՆ
ԲԻՒՐԵՂԱՅԻՆ ՍԱՊՈՆ
№ 4711
Գլիցերինի բարձր չափ
Տնտեսութիւն փրփուրի առատութեան պատճառով։
ՎԱՐԴԻ ՔՆՔՈՅՇ ՀՈՏ
Ահա այդ սապոնի ընտրող բարձր յատկութիւնները
Կօլօկօլնայեա փ. № 4711
Ферд. Мюльгенсъ
Кельнъ н/Рейнѣ отд. въ Ригѣ
5—1

Լոյս տեսաւ և վաճառւում են
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
1910 Թ.
«ՇԻՐԱԿ»




ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ պատկեր. Օրացոյցներ
Բոլորովին նոր յաւելուածներով ճոխացրած ու հարստացրած և գունաւոր պատկերներով զարդարուած, Դիրքն ու ձեւը բոլոր հայ օրացոյցներից մեծ և արտաքինով չքեղ։
ԾՈՑԻ օրացոյցը ունի առանձին յաւելուած վեհափառ Կաթողիկոս Իզմիրլեանի ուղեւորութիւնը Կ. Պոլսից էջմիածին և օծումը։
Պատի օրացոյցի տախտակը պատրաստուած է լիտոգրաֆիայում մի քանի գոյնով և ներկայացնում է «Հայաստանը եւ Հայի անցեալ փառքը»—Հայ թագաւորների և իշխանների պատկերները՝ Հայկ Նահապետ, Արամ Բաշ, Պարոյր Հայկազն, Տիգրան Երուանդեան. Վաղարշակ Արշակունի, Արտաշէս Աշխարհակալ, Տիգրան Մեծ, Արգար Եդեսացի, Վասակ Սիւնեցի, Աշոտ Բագրատունի, Աշոտ Երկաթ, Սմբատ Շահն-Շահ, Ռուբէն Իշխան Կիլիկիայի, Լեւոն Ա. Լեւոն Զ. վերջին թագաւոր հայոց։
Գները—Պատինը—30 կոպ. Ծոցինը—20 կոպ. Փումարով գնողներին զեղչ։
Դիմել՝ Александрополь, типографія «Ширакъ» Карапету Ананянцу

1910 թուի համար
ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

# „ԳԻՒՂԱՑՆՏԵՍ“

Գատկերազարդ շաբաթաթերթի (Բ. տարի

«ԳԻՒՂԱՏՆՏԵՍԻ» բովանդակութիւնը. Երկրագործութիւն։ Անասնաբուծութիւն և կաթնատնտեսութիւն։ Պարտիզպանութիւն և պտղաբուծութիւն։ Այգեգործութիւն և գինեգործութիւն։ Ցանուկ բոյսերի մշակութիւն։ Մեղուաբուծութիւն և շերամապահութիւն։ Բանջարաբուծութիւն։ Թռչնապահութիւն։ Կոօպերացիա և տնտեսական ընկերութիւններ։ Գիւղատնտեսական նորութիւններ։ Գիւղատնտեսական կեանք։ Գրախօսութիւն։ «Թղթակցութիւններ։ Տնայնագործութիւն և տնարարութիւն։ Հարց և պատասխաններ։ Պատարկը և յայտարարութիւններ։
Առաջակայ 1910 թւին «Գիւղատնտեսին» աշխատակցելու են նաև թիւրքահայ գիւղատնտեսներ։
«Գիւղատնտեսը» 1910 թւի իր տարեկան բաժանորդներին թերթի համարներից դուրս տալու է որպէս նուէր՝
ՀԱՑԱՐՈՑՆԵՐԻ ԵՒ ԽՈՏԱԲՈՑՆԵՐԻ ՓՈՐՁՆԱԿԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՍԵՐՄԵՐ
Բաժնեգինը

| Ռուսաստանում | | Արտասահմանում | |
|---|---|---|---|
| Տարին | 3 րուբլի | Տարին | 4 րուբլի (12 ֆրանկ) |
| Կէս տարին | 2 րուբլի | Կէս տարին | 2 ր. 50 կ. (7 ֆրանկ) |

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція «Гюхатнтесъ». 3—2

ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 Թ.

# ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

(ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ)
Գրական, քաղաքական, հասարակական և առեւտրա-արդիւնաբերական
ԼՐԱԳԻՐ
ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՌԺԱՄԱՆԱԿ
ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ
Չորեքշաբթի, ուրբաթ եւ կիրակի օրերը
Մասնակի աշխատակցութեամբ Գ. ԱՂԱՅԵԱՆԻ, ԼԷՕԻ և ՆԱՐ-ԴՈՍԻ։
«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» բաժանորդները կարող են ստանալ «ԽԱԹԱԲԱԼԱ» երգիծաթանական շաբաթաթերթը արժան վճարով։
ԲԱԺՆԵՎՃԱՐՆ Է

| ՍՈՒՐՀԱՆԴԱԿ (Առանձին) | | ԽԱԹԱԲԱԼԱՆ (Առանձին) | |
|---|---|---|---|
| Տարեկան. | 7 — | Տարեկ. Թիֆ. 4 ր. դուրսը 5 ր. | |
| Կէս տարին. | 4 — — | Կէս տ. » 2 ր. » 3 ր. | |
| Երեք ամիսը. | 2 — 25 | 3 ամ. Թիֆ. և դուրսը. 1 ր. 50կ. | |
| Մէկ ամիսը | — — 75 | Մէկ ամիսը — — 50կ. | |

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ և ԽԱԹԱԲԱԼԱ
(Միասին)

| | | | |
|---|---|---|---|
| Տարեկան. | 10 — — | Երեք ամիսը. | 3—50 |
| Կէս տարին. | 6 — — | Մէկ ամիսը. | 1—20 |

ՆՈՐՈՒԹԻՒՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ!!
Պուշկինեան պասաժ № 4—6
ՄԻԱԿ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Ցանուկ գերմակային պիտոյքների. Տղամարդկանց և կանացի զանազան կոճակների, մետաքսի և բրդի չերիտների, թամբակի և մետաքսի զանազանագոյն թելերի. ձև անելու չափեր, կաւիճ, մեքենայի իւղ, զանազան ասեղներ, փուշեր (փիւսկիլ) գայթաններ։ Այստեղ էլ ընդունւում են պատւէրներ զանազան կտորներից շինել կոճակների, նոյնպէս ամեն տեսակ փայլեցնելե ապրանքների. միշտ ստացւում են սեզոնի նորութիւններ։ Խնդրում եմ գնորդներին առանց ուշադրութեան չթողնել վաճառատունս և անձամբ համոզուել խանութիս մէջ։
Ապրանքների գները նշանակուած են ամենաէժան։
10—6 Մ. Գ. ԲԱԽՉԻՆԵԱՆՑ

—Տիկին, կարծեմ դուք այնքան չէք աշխատել համոզել ինձ, որ վախենում էք ապամարդկանցից...
—Ո՛չ.. ես միմիայն վախենում եմ երեխաներից..

—

Նէլ—Ասացէք խնդրեմ, որքան կարժենայ իմ նկարս...
Նաւ—Ձեզ համար, ոչինչ տիկին։
Նէլ—Օ՛, դա չափազանց թանգ է.

oooo Մանուֆակտուրային վաճառք oooo

МАНУФАКТУРН. магазинъ

# ՅՈՎ. ԳՐ. ԿԱՃԿԱՃԵԱՆԻ

И. Г. КАЧКАЧЕВА
Сололакск. ул. № 4

Հոկտեմբերի 20-ից, Սոլոլակեկայա փողոցի վրայ, «Պրովոդնիկ ընկ.» խանութի շարքում, Ազովո-Դոնեան բանկի ներքեւում, (Ամիրաղեանի նախկին խանութի տեղը) բացուած է մանուֆակտուրայի ապրանքների ՎԱՃԱՌՔ. Ստացուած են մեծ քանակութեամբ սեզոնի նորութիւններ, այն է՝ մետաքսէ, բրդէ, մահուդէ, բամբակէ և բոլոր գոյնըգոյն հիւսուածեղէնների պաշտօնազգեստների կտորներ, աշակերտական ամենալաւ տեսակի մահուդ և զանազան պլէդներ՝

——ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ——

Բրդէ շալեր, պլիշի, բայկի, պիկէ, ատլասի եւ Քաշմիրի վերմակներ։

ՔԱԹԱՆԷ ԱՊՐԱՆՔ ԵՒ ՍԵՂԱՆԱՏԱՆ ՍՓԻՏԱԿԵՂԷՆ

ամենալաւ ֆաբրիկաների, գործվածքի տեսակ, պլիշի սփռոցներ, թաւիշ, պլիւշ և մոնչնար։ Բազմաթիւ գոյներ։ Սատին, բատիստ, բումազէյ, նանսուկ և չիթ։ Բամբակէ գործուածքներ՝ սպիտակ և գունաւոր՝ սպիտակեղէնի համար և յայտնի ֆաբրիկաների սաւաններ։ Բայկա և ֆլանէլ՝ գունաւոր և սպիտակ։ Արշինով վաճառքը մեծաքանակ վաճառքի գնով։

—— ՎԱՃԱՌՔԸ ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ՎԵՐ ——

## ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ

—o— ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ —o—

20—4



ՇՏԱՊԵՑԷՔ ԳՆԵԼ

## Ա. Ի. ԱՄԻՐԱՂԵԱՆԻ

Մանուֆակտուրի վաճառատունը Թամամշեանի քարւանսարայում №№ 19, 22, և 23 առևտուրը վերջացնելու պատճառով

ԱՓՇԵՑՈՒՑԻՉ ԷԺԱՆ

Ծախւում է եղած բոլոր ապրանքը—ամէն տեսակ մետաքսի, բրդի մահուդեղէնի, քաթանի, բամբակի և կռհաւորութեան կտորներ։

ՕԳՏՒԵՑԷՔ ՀԱՆԳԱՄԱՆՔԻՑ

10—3


«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԿՈՄՊԼԷԿՏՆԵՐ

ՓԱՌԱԿԱԶՄ

| | |
|---|---|
| 1906 թ. արժէ | 5 րուբլի |
| 1907 թ. | 7 ր. — |
| 1908 թ. | 7 ր. — |

Դատաւոր.—Ի՞նչ էք բողոքում տիկին.
—Սա գլուխս ուղեց.
—Ի՞նչ ունիք ձեզ արդարացնելու.
—Պ. դատաւոր, ի՞նչ եմ անում ես գլխա գլուխը, ես խոմ խաշ ծախող չեմ։


МАГАЗИНЪ

## Композиція

Тифлисъ, Пушкинскій пассажъ № 8



Громадная экономія

шведскаго композиціон. бѣлья. Носится не менѣе двухъ лѣтъ. Постоянный большой выборъ свѣжаго товара

Воротниковъ, манишекъ и манжетъ.

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ

передѣлка въ любой фасонъ безплатно

М. А. КАЛТАГЯНЦА 30—11





ԷՅՆԵՄ

ԼԱՒԱԳՈՅՆ ՇՕԿՕԼԱԴ

13—6



Ս. և Ա. ՂՈՒԿԱՍԵԱՆՆԵՐԻ



## ՁԿՆԱՎԱՃԱՌԻ ՄԱԳԱԶԻՆԸ

(Պուշկինեան փող. տուն Սանդուխեանի, վրաց սեմինարիայի դիմաց)

Ամէն օր ստացւում է սեփական ձկնորսութիւներից թարմ ձուկ

ՍԵՒՐՈՒԳԱ, ՕՍԷՏՐԻՆ, ԹԱՌԻ

Ունինք մեծ քանակութեամբ թարթի դոշ, Դօնի և տեղական բալիկ, ճիպա ցալճմալա, եանի և այլն։

ԸՆՏԻՐ ՏԵՍԱԿԻ ՁԿՆԻԹ (жидка) ԵՒ ԽԱՒԻԱՐ

Կովկասեան և արտասահմանեան ձկնային կոնսերւներ Գները ամենաչափաւոր։

20—11


Խմբագիր-հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ.

Типографія Т-ва „Культура", Вельяминовская, 18.



ԱԼԻՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐԸ ԵՒ ԻՐ ԳՐՔԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

## ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ



Տէրտէր.—Ես քեզ երեցփոխ ընտրել տւի, որ դու էլ ինձ թամազ լինես։ —

Երեցփոխ.—Ի հարկէ տէրտէր ջան, էդպէս պիտի լինի, մի ձեռքով իսկի ծափ չի կարելի տալ. ես էլ մարդ եմ, ես էլ բան գիտեմ, բա որ երեցփոխ եղայ—քեզ որ մոռանամ, էլ ո՞ւմը պիտի յիշեմ։

## ՀԱՅԵՐԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



—Ա՛ կնիկ, հիմի ռուսերէն խօսա, խօ տեսնում ես թէ թազա շորեր ենք հագել։

—Բա ի՞նչ կանեմ, կը խօսեմ բա՛, խո՞ չեմ խօսալ։







ԲԱՑՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1910 թ.

# 5 ԽԱԹԱԲԱԼԱ 5

ՏԱՐԻ ՏԱՐԻ

## Երգիծաբանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն միակ գունաւոր պատկերազարդ հայ շաբաթաթերթն է:
«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն հրատարակւում է ռուսական եւ եւրոպական լաւագոյն թերթերի օրինակով:

«ԽԱԹԱԲԱԼԱ»-ն շարունակւում է նոյն ուղղութեամբ, նոյն արտիստների եւ գրագէտ երգիծաբանների մասնակցութեամբ, ինչպէս եւ անցեալ տարիները:

**ՄԵՐ ՄՇՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՆ ԵՆ**

Գրիչն ու Թանաքը, Ներկն ու Հանաքը

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԱՆԱԼ ՊԱԿԱՍ ՎՃԱՐՈՎ

## „ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագիրը, որն առայժմ լոյս է տեսնելու շաբաթը երեք անգամ, կիրակի, չորեքշաբթի և ուրբաթ, իսկ ապագայում ամեն օր

«ԽԱԹԱԲԱԼԱՅԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է
ԱՌԱՆՁԻՆ

| | |
|---|---|
| Տարեկան . . . . . . . | 5 րուբլի |
| Կէս տարին . . . . . | 3 ր. |
| Երեք ամիսը . . . . , | 1 ր. 50կ. |
| Թիֆլիզում տարեկան | 4 րուբլի |

«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» ԲԱԺՆԵԳԻՆՆ Է
ԱՌԱՆՁԻՆ

| | |
|---|---|
| Տարեկան . . . . . . . . | 7 րուբլի |
| Կէս տարին . . . . . . . | 4 ր. » » |
| Երեք ամիսը . . . . . . | 2 ր. 25 կ. |
| Ամիսը . . . . . . | 75 կ. |

**«ԽԱԹԱԲԱԼԱՆ» ԵՒ «ՍՈՒՐՀԱՆԴԱԿԸ» ՄԻԱՍԻՆ ԱՐԺԵՆ**

| | |
|---|---|
| Տարեկան . . . . . . . . | 10 րուբլի |
| Կէս տարին . . . . . . . | 6 ր. |
| Երեք ամիսը . . . . . . | 3 ր. 50 կ. |
| Մէկ ամիսը . . . . . . | 1 ր. 20 կ. |

Հասցէն Тифлисъ. Редакція „Хатабала“. Հեռագրով Тифлисъ „Хатабала“
Արտասահմանից Tiflis Gaucas Redaction «Khatabala»